



European Union



Society Development  
Centre of Akhaltsikhe



Women in Europe for  
Common Future



Civil Society Local Energy Efficiency Network

Civil Society Local Energy  
Efficiency Network

## Էներգաարդյունավետություն. տեղերում կոալիցիաների ստեղծում

24-ից 28-ը սեպտեմբերի 2015թ. Դիլիջան քաղաքում, «Էներգաարդյունավետություն. տեղերում կոալիցիաների ստեղծում» (CLEEN) ծրագրի շրջանակներում անցկացվեց ուսումնական դասընթաց: Դասընթացին մասնակցեցին էներգաարդյունավետության ոլորտում գործող հասարակական կազմակերպություններ՝ 6-ը Հայաստանից և 8-ը Վրաստանից:

Ծրագիրն ուղղված է 4 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում համագործակցության տարածաշրջանային ցանցերի ստեղծմանը, որպիսով:

- բարձրանա հասարակական կազմակերպությունների հզորությունը,
- ընդլայնվի համագործակցությունը տեղական իշխանությունների և մյուս շահագրգիռ կողմերի միջև,
- ձևավորվի քաղաքական երկխոսության միջավայր,
- բարձրանա իրազեկությունը էներգախնայողության վերաբերյալ,
- բարձրանա տեղական ինքնակառավարման և կենտրոնական կառավարման մարմինների հաշվետվողականությունը էներգաարդյունավետության հարցերով:

Այդպիսով ծրագիրը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կապահովի էներգախնայողության, էներգիայի վրա ծախսերի կրճատման և այլ ոլորտների հետ համագործակցության միջոցով բնակչության աղքատության նվազեցմանը նպաստելու վերաբերյալ գիտելիքներով: Հայաստանի համար որպես թիրախային տարածքներ ընտրված են Վրաստանի հետ սահմանային մարզերը՝ Շիրակը, Լոռին և Տավուշը:

Դասընթացն անցկացվել է «Կանայք Եվրոպայում հանուն ընդհանուր ապագայի» (WECF), կազմակերպության աջակցությամբ, Եվրոպական Միության ֆինանսավորմամբ և «Ախալցխիսեի հասարակական զարգացման կենտրոն» կազմակերպության ղեկավարությամբ:



«Երրորդ բնություն» հասարակական կազմակերպություն  
Էլ. փոստ. [thirdnaturengo@yandex.ru](mailto:thirdnaturengo@yandex.ru)  
Կայք. <http://www.3nature.am/>